№ 7. ՓԵՏՐՎԱՐԻ 3 (15) 1877 ՓԵՏՐՎԱՐԻ 3 (15) № 7.

ՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 7 ռուբլ, կէս տարվանը 4 ռուբլ։

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը, պ. Ծատուրեանի և Աբասիանեանի խանութում։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի *Тифлисъ. Редакція „Мшакъ„*

ՄՇԱԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի և տօն օրերից)։

Յայտարարութիւնները ընդունվում են ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ՄՇԱԿ

ԼՐԱԳԻՐԸ

կը հրատարակվի այս 1877 թվից շաբաթը երկու անգամ։ Տարեկան գինը 7 ռուբլ, կէս տարվանը 4 ռուբլ։

ՊԷՊՕ

ԿՕՄԵԴԻԱ ԵՐԵՔ ԱՐԱՐՈՒԱԾՈՎ

Հեղինակութիւն

Գ. ՍՈՒՆԴՈՒԿԵԱՆՑԻ

Ծախվում է Թիֆլիսում «Մշակ» լրագրի խմբագրատան մէջ և պ. Զ. Գրիգորեանցի գրավաճառանոցում։—Գինը 30 կոպէկ։

Այլ տեղերից պէտք է դիմել հետևեալ հասցէով՝ «Въ Тифлисѣ, въ Кавказскую книжную торговлю З. Грикурова и К-°, աւելացնելով դրքոյկի գնին 5 կոպ. ճանապարհի ծախս։ 2—3

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ամեն բան փողի համար։—Ներքին տեսութիւն։ Թիֆլիսի Միքայէլեան արուեստագործական ուսումնարան։ Նամակ Մոսկվայից։ Նամակ Խարկովից։ Նամակ Խմբագրին։ Նամակ Խմբագրին։ Ներքին լուրեր։—Արտաքին տեսութիւն։ Հայերի դրութիւնը Թուրքիայում։ Անգլիա։ Նամակ Աստրիայից։ Արտաքին լուրեր։— Խառն լուրեր։ —Յայտարարութիւններ։

ԱՄԵՆ ԲԱՆ ՓՈՂԻ ՀԱՄԱՐ

Գուցէ ոչ մի ազգ չը կայ աշխարհիս երեսին, որ այդքան զուրկ լինէր ամեն տեսակ իդեալներից, ինչպէս հայոց ազգը, գուցէ ոչ մի ազգ չը կայ որ հայերի պէս նիւթապաշտ լինէր։

Հայի համար չը կան վերացական գաղափարներ, բարոյական իդեալներ.... Հայը ամեն բանի վրա նայում է փողի վաստակելու հայեացքից....

Ուսում, հասարակական գործունէութիւն, պարապմունք, պաշտօն, կոչում, մասնագիտութիւն, սէր, ընտանիք,—ամեն բան հայի աչքում համեմատական արժէք ունի, նայելով թէ որքան այս կամ այն գործ, այս կամ այն գաղափար, այս կամ այն երևոյթ նիւթապէս շահաւէտ է....

Հայը ամեն բանից սպասում է անմիջական արդիւնք, նիւթական օգուտ, շահ, տոկոս....

Ի հարկէ բացառութիւններ ամեն տեղ կան, ուրեմն կան և մեր ազգի մէջ,—բայց մեր ազգի ընդհանուր բնաւորութիւնը՝ շահասիրական նիւթապաշտ ոգին է, որ առաջնորդում է հային կեանքի ամեն տեսակ հանգամանքում....

Նիւթապաշտութիւնը, նիւթական շահը՝ հայի ուղեցոյց է նրա կեանքի իւրաքանչիւր քայլափոխում։

Եւ ահա՛ այդ նեղ, սահմանափակ, անհասարակական բնաւորութիւնը հայը հպարտութեամբ անուանում է գործնական ոգի։

Մեր ծնողների մեծ մասը տալիս են ուսում իրանց երեխաներին ոչ թէ այն պատճառով, որ պարզ հասկանում են ուսման բարոյական և մտաւոր օգուտը, բայց այն պատճառով որ գիտեն թէ ուսումը մի միջոց է փող վաստակելու....

Հայը ընտրում է իր համար կեանքի մէջ պաշտօն, մասնագիտութիւն, պարապմունք, ոչ թէ այն պատճառով որ այս կամ այն հասարակական պաշտօնին, մասնագիտութեանը կամ պարապմունքին սրտով համակրէր, բայց հաշիւ անելով թէ որ պարապմունքը նրան աւելի արդիւնք կը տայ....

Հայը ուսում է առնում հաշւով, կեանքի մէջ իր գործ դնելու մասնագիտութիւնը ընտրում է հաշւով, պսակվում է հաշւով, մեռնելիս մինչև անգամ կտակ է անում հաշւով, հաւատացած լինելով որ բարեգործական նպատակով մի քանի կոպէկ կտակելով, նա բաց է անում իր համար դրախտի դռները,—նա մեռնելիս միայն ընդունակ է զոհաբերութիւն անել, հասարակական մի բարի գործ կատարել, այն էլ անում է շահասիրական նպատակով, իր հոգու համար։

Վերջին ժամանակ մեր անդրկովկասեան հայերի մէջ մեծ ձրգտումն է նշմարվում սովորել ռուսաց լեզու, և այդ լեզուն զաւակներին սովորեցնել....

Բայց կարծում է՞ք, որ հայը այդ անում է որովհետև կշռել է, հաշուել է, ըմբռնել է մի քաղաքացու համար պետական լեզուի ուսումնասիրութեան անհրաժեշտութիւնը,—ո՛չ, նա այդքան զարգացած չէ... նրա հայեացքը աւելի նեղ է, աւելի սահմանափակ է՝ նա նայում է ռուսաց լեզուի վրա, որպէս հաց ճարելու լաւ միջոցի վրա.... նա միայն այդքան գիտէ՝ ռուսերէնը հաց է տալիս, հայերէնը հաց չէ տալիս....

Եւ նա արհամարհում է իր ազգային, իր մայրենի լեզուն, միայն այն պատճառով, որ նրանով հաց չէ կարելի ճարել.... Հայը չունի բարոյական բարձր գաղափարներ, նա ամեն բանի վրա նայում է առևտրական կէտից, նա իր մայրենի լեզուի վրա էլ նայում է ինչպէս մի ապրանքի վրա... ապրանքը լաւ չէ ծախվում, հին է,—ուրեմն նրան հարկաւոր չէ առնել....

Հայը նայում է իր մայրենի լեզուի վրա, ինչպէս մի կոտրած ամանի վրա, ինչպէս մի մաշված շորի վրա....

Այո՛, ամեն բան փողի համար...

Բայց եթէ մի օր հայը տեսնէր թէ իր արհամարհած մայրենի լեզուն սկսում է գին ստանալ, գործադրվել հասարակութեան մէջ, եթէ նա տեսնէր թէ աղջկան բաժինք, փող տալու տեղ, կարելի է, օրինակ, նրան սովորեցնել իր մայրենի լեզուն, թէ մայրենի լեզուով ընտանիքում խօսող և մայրենի լեզուով երեխաներին դաստիարակող հայուհի գրաւիչ զօրութիւն ունի հայ երիտասարդի համար,—այն ժամանակ բոլոր հայ ծնողները կը սկսէին իրանց աղջկերանց հայերէն սովորեցնել, որովհետև այն ժամանակ հայերէն լեզուն էլ մի շահաւէտ գործ կը դառնար, հաց կը տար, այսինքն միջոց կը տար նրանց իրանց աղջկերանցից ազատվելու, առանց աղջկան մի որ և է բաժինք տալու՝ միջոց կը տար ծնողներին իրանց ապրանքը տեղաւորելու, կամ ինչպէս թիֆլիսցիք ասում են՝ նրան սաղացնելու....—

Գ. Ս.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԹԻՖԼԻՍԻ ՄԻՔԱՅԷԼԵԱՆ ԱՐՈՒԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ

Յունվարի 31-ին, երկուշաբթի օրը, Թիֆլիսի Քաղաքային Դումայի ընդհանուր նիստում վերջապէս ընդունվեցաւ մեր Միքայէլեան արուեստագործական ուսումնարանի կանոնադրութեան պրօէկտը։ Վաղուց է որ այդ ուսումնարանի պրօէկտը ժողովում էր զանազան կոմիսիաների ձեռքով, և այլ և այլ փոփոխութիւններ կրելուց յետոյ, դարձեալ չէր ընդունվում....

Վերջապէս այժմ որ պրօէկտը ընդունվեցաւ, մենք կաշխատենք երկու խօսքով ծանօթացնել մեր ընթերցողներին նրա էութեան հետ։

Միքայէլեան արուեստագործական ուսումնարանը բաղկացած կը լինի երկու գլխաւոր մասերից ա) ընդհանուր կրթողական դասատներից, օրէնքով ճանաչված քաղաքային դպրոցների ուղղութեամբ և պրոգրամայով և բ) արուեստագործական դասատներից, որտեղ աշակերտները գործնական արվեստներ կը սովորեն և կը լսեն մի քանի դասեր արվեստներին օգնական գիտութիւններից։

Դասատուութիւնը ամենքի համար ձրի կը լինի։ Պրօէկտի այդ կէտը և նոյնպէս մի այլ կէտ մենք շատ հաւանեցինք՝ այն է որ ուսումնարանի առաջին, ընդհանուր զարգացողական մասը բաժանված կը լինի երեք բաժանմունքի վրա՝ ռուսաց, հայոց և վրաց, որոնցից իւրաքանչիւրի մէջ երեխաները կը սովորեն տարրական առարկաները իրանց մայրենի լեզուով, բայց կը սովորեն մի և նոյն ժամանակ և ռուսաց լեզու, որպէս առանձին առարկայ, իսկ հետևեալ տարիներում ուսումը կը շարունակվի ի հարկէ ռուսերէն լեզուով։

Չէ կարելի չը համակրել պրօէկտ կազմողների և այն առաջարկութեանը, որ բոլոր աշակերտները արուեստագործական ուսումնարանում անվարձ կը ստանան ճաշ, որ բաղկացած կը լինի մի տեսակ մենդարաթ կերակուրից։ Եւ ճշմարիտ արուեստներով պարապող երիտասարդները, որոնք ի հարկէ կը պատկանեն մեր քաղաքի աղքատ ազգաբնակութեանը, մեծ մասամբ երևի քաղաքի հեռու տեղերից կը հաւաքվեն ամեն օր դպրոցի մէջ, և առաւօտեան ժամեր պարապելուց յետոյ, միջոց կունենան նոյն իսկ ուսումնարանում հանգստանալ, ճաշ վայելել, և ստիպված չեն լինի նորից գնալ տուն հաց ուտելու համար, որ ճաշից յետոյ կրկին շարունակեն իրանց պարապմունքները։

Ուսումնարանը կը գտնվի Նորին Բարձրութեան Փոխարքայի Հովանաւորութեան, և Քաղաքային Դումայի վերահսկողութեան տակ։

Ուսումնարանը կը պատրաստէ զանազան արվեստների ճիւղերի մէջ վարպետների օգնականները և ատեստատը կը տրվի նրանց ուսումնարանական մանաժողովի ձեռքով, քաղաքագլխի և արուեստաւորների դլխաւորի ստորագրութեամբ։

Արուեստագործական ուսումնարանը կը կառավարէ ուսումնարանական մանաժողովը վեց անդամներից բաղկացած, որոնք կընտրվեն Դումայից։ Ուսումնարանի ծախսերը կը մտնեն ընդհանուր քաղաքային բիւդժէտի մէջ։ Պրօէկտ կազմողները ներկայացրին մի մանրամասն շատատ և նոցա կարծիքով ուսումնարանի երկու մասերն էլ պահպանելու համար բաւական կը լինի տարեկան 14,000 ռուբլ դումարը։

Պէտք է վերջապէս և մեր Թիֆլիս քաղաքը մի բան անէ ուսումնարանական գործի համար, որովհետև մինչև այժմ, պէտք է

ԳՎԱԽԵՂԵՑՈՒ ԿՈՒՄԸՆԴ

Ցարեվոդարանի (Вегерпнарный Институт) մասին։

Ցարեվոդարանը 6-դ մինչև 10-դ դարերում Ամիդի (Դիարբեքիր) մոտ գտնվող Ամիդ գյուղի մոտ գտնվող Ամիդ գետի ձախ ափին

հարցրէք ժողովրդի, Փոքր-Ասիայի հայ ամբոխի կարծիքը, հետևեցէք բողոքներին, որոնց ձայնը Կ. Պոլսի հայ հոգևորականութիւնը և հարստացած բուրժուաները իրանց շահերի համար աշխատում են խեղդել, լսեցէք նրանց ձայնին, հետևեցէք նրանց յուսահատված գրութիւններին գաւառներից,— և կը տեսնէք թէ ինչ սարսափելի դրութեան մէջ են Թիւրքիայի հայերը, կը տեսնէք որ ազգը ոչ թէ միայն չէ աճում, չէ բազմանում, բայց հայերի թիւը օրից օր նուազում է, հայերը Հայաստանից անհետանում են, մեռնում են, կոչում են, գաղթում են, և մի քանի տասնեակ տարուց յետոյ էլ հայ չի մնայ Հայաստանում, չը նայելով որ սահմադրութիւն և երևակայական իրաւունքներ ունեն....

Պէտք է ամեն բանում մի չափ և մի կշիռ ունենալ։ «Տիֆլ. Վեստ.» լրագիրը որ մեզ մտա իրան այդքան թշնամի է ցոյց տալիս զանազան հարստահարողների, կապալառուների, բուրժուազական եսական դասի,—ուրիշ կողմից կարծում է թէ կարող է պարզ համոզմունք կազմել մի ժողովրդի դրութեան մասին, հաւատալով նոյն հարստահարողների, հարստացած և ազնուացրած՝ բէգութիւն, փաշայութիւն, ամիրայութիւն և էֆէնդիութիւն ստացած զանազան գողերի խօսքերին։

Մի ճնշված հայ որ զանազան անասելի ճանապարհներով հասել է փառքին և պաուին, դառել է գայմագամ, վալի, մինիստրի օգնական, պալատական պաշտօնեայ, դեսպան, նոյն իսկ մինիստր,—ի հարկէ մի հայ բուրժուա որ կապալառուից բարձրացել է մինչև բարձր պաշտօնները, բարձրացել է կաշառքներ առնելով և նրանց թիւրքայ բարձր պաշտօնեաների հետ բաժանելով, ուրիշ կողմից իր թշուառ գիւղական հայրենակիցներին, գիւղական աշխատասէր և իսկ հայ ամբոխը հարստահարելով,—ի հարկէ այդ տեսակ հայը կասէ թէ հայոց ազգը երջանիկ է Թիւրքիայում։

Հարցրէք այժմ մի որ և է Յովհաննէս, Կիրակոս, Մարտիրոս էֆէնդին,—և նա ի հարկէ կը պատասխանէ թէ հայերը Թիւրքիայում երջանիկ են.... Հարցրէք Օդեան էֆէնդին, որ Թիւրքայ տերութեան հաշուով ամբողջ Եւրոպայում ճանապարհորդում է որ մի փոխառութիւն անէ, ի հարկէ նա պէտք է ասէ թէ Թիւրքայ բոլոր հպատակները բաղդաւոր են, և տերութեան ֆինանսները հիանալի դրութեան մէջ են....

Բայց կարդացէք Թիւրքիահպատակ հայ ռամկապետական ոգով մեծացած սակաւաթիւ երիտասարդութեան կարծիքը, ժողովրդի մարդիկների, ամբոխի բարեկամների կարծիքը,—և բոլորովին ուրիշ բան կը լսէք.... Կարդացէք Կ. Պոլսի հայ լրագիրներում գաւառներից գրած նամակները և բողոքները, կարդացէք «Մշակի» № 5-ի մէջ «Մանզումէի Էֆքեար» լրագրից արտատպված մի զգացող հայ երիտասարդի գրած յօդվածը,—և այն ժամանակ կը տեսնէք, ով է արդարը՝ մենք, և մեզ հետ գաւառացի հայերը, որ 3 միլիոն հայ ժողովրդի օգուտներ ենք պաշտպանում, թէ Կ. Պոլսի եսական և կեղծաւոր հայ հոգևորականութիւնը և հայ հարստահարող, գող և կաշառակեր ամիրաներ, էֆէնդիներ, պալատական ձրիակեր պաշտօնեաներ, տերութիւնից վարձված ատիճանաւորներ, և տերութեանը հաճելի և նրա հետ ժողովրդից իրանց կողոպտած աւարը բաժանող կապալառուներ....

Բուրժուազական մի փոքրիկ, թէև այժմ ունեցող անձնաշահ խումբի կարծիքը չէ կարող ժողովրդի ընդհանուր կարծիք լինել։ Կապալառուի կարծիքը որ նայում է ժողովրդի վրա, ինչպէս կոմիտատու կենդանու վրա, և եսական հոգևորականի կարծիքը, որ դարերով համբերել է և օրհնել է ամեն տեսակ անարդարութիւն, հարստահարութիւն և արիւնահեղութիւն,—նրանց կարծիքը չէ կարող ժողովրդի կարծիք համարվել....

Կ. Պոլիս Հայաստան չէ, և այդ մարդիկ ժողովրդի անմիջական օգուտների ներկայացուցիչներ չեն կարող համարվել....

Մինչև որ պետական խորհրդի մէջ ամենքը և նրանց թւում երկու հայ հոգևորականները գովում էին և ոգևորված խօսում էին Թիւրքայ տերութեան վրա, և մերժեցին Եւրոպայի առաջարկութիւնները, միայն երեք մարդ բողոքեցին Թիւրքայ տերութեան դէմ և չը ստորագրեցին եւրոպական պահանջների մերժումը՝ երկու Թուրք՝ Հալիմ և Հալէթ փաշաները և մի հայ, այն էլ հայ բողոքական՝ Յակոբ Մատթէոսեան....

Գ. Ա.

ԱՆԳԼԻԱ

Միջազգային ընկերութեան հեռագիրը հաղորդում է Լոնդոնից, յունվարի 28-ից (փետրվարի 9) հետևեալ նշանաւոր տեղեկութիւնները՝ «Երկուշաբթի օրը, Հասարակաց դահլիճում (ստորին պարլամենտում) յայտարարված են Կէմբրլի հարցմունքները, արդեօք էլեօտ (Կ. Պոլսի անգլիական դեսպանը) գտնվում է դեռ ևս պետական ծառայութեան մէջ, և յետաձգված է արդեօք Թիւրքիայի կողմից 1855 թ-ի փոխառութեան կուպօնների վճարելը։ Նորակօտ պատասխանեց Տէֆլէրի հարցմունքին, որ անգլիական տերութիւնից արդէնվված է անգլիական օֆիցէրներին Թուրքայ զինուորական ծառայութիւն մտնելը։ Լօրդերի դահլիճում (վերին պարլամենտում) լօրդ Բոսսէլ երկուշաբթի օրը մի առաջարկութիւն կանէ, որի մէջ կը յայտնէ այն համոզմունքը թէ Անգլիայի կողմից Թիւրքիայի պէս մի բարբարոսական պետութեան հետ բարեկամական յարաբերութիւնների պահպանելը յարմար և վայել չէ անգլիական տերութեանը և որ հնարաւոր է միայն թշնամական կերպով վերաբերվել դէպի Թիւրքիան։»

Արդեօք խաբեբայութիւն է, խորամանկութիւն է այդ, արդեօք կօմէդիա են խաղում անգլիական պարլամենտի պատգամաւորները Եւրոպայի հետ, թէ Բոսսէլի և Կէմբլի պէս նշանաւոր մարդիկ, ամբողջ Եւրոպայում անուն ունեցող անձեր անկեղծ են, իրանց համոզմունքների և արտասանած խօսքերի մէջ,—այդ դժուար է ասել....

Միայն ճանաչելով անգլիական ժողովրդը, անգլիական տերութիւնը, նրա պետական մարդկերանց, ճանաչելով մի կողմից այդ երկրի հասարակական կարծիքի դէմը, իսկ միւս կողմից տերութեան եսական անխիղճ և միայն նիւթական շահեր աչքի առաջ ունեցող անսիրտ քաղաքականութիւնը, գիտենալով որքան հասարակական կարծիքը և տերութեան դրծունէութեան եղանակը այդ երկրում տարբեր են միմեանցից,—կարելի է այն հաստատած լինել որ Բոսսէլի, Տէֆլէրի և Կէմբլի պէս անձինք ճշմարիտ անկեղծ են իրանց մարդասիրական քաղաքականութեան, իրանց հոմակրելի համոզմունքների մէջ, բայց նոյն մարդիկ եթէ վաղը հասարակ պատգամաւորներից, հասարակութեան ներկայացուցիչներից հանեին կառավարութեանը, երկրի ղեկը իրանց ձեռքը բռնէին,—երևի նոյնքան անսիրտ, եսական, անմարդասէր և միմիայն երկրի նիւթական շահերը աչքի առաջ ունեցող պիտի դառնային, ինչպէս նոքա, որոնց դէմ նոքա այժմ բողոքում են, որոնք այս բոպէիս երկրի կառավարիչներ են։ Եւ փոխադարձապէս անգլիական պետական մարդիկ, թողնելով երկրի կառավարչական պաշտօնները և դառնալով ժողովրդի ներկայացուցիչներ, իրանք շատ անգամ դառնում են ազատամիտ և սկսում են բողոքել այն քաղաքականութեան դէմ, որին իրանք տարիներով ծառայել են....

Կարելի է հաստատած լինել որ եթէ լօրդ Բոսսէլը այս բոպէիս Դիզրայէլիի տեղ կը լինէր, նա այդ վերջինին նման կը հետևէր այն անմարդասէր, Անգլիայի նիւթական շահերին, ամեն բարձր բարոյական գաղափարներ, մարդկութեան իդէալներ, ճնշված ազգերի երջանկութեան ղէմ բերող, ոտնակոխ անող, անսիրտ քաղաքականութեանը,—իսկ Դիզրայէլի, պարլամենտում պատգամաւոր լինելով, կը բողոքէր այդ տեսակ քաղաքականութեան դէմ։

ՆԱՄԱԿ ԱՐԻՍՏՐԻԱՑԻՑ

Վիէննա, 29 յունվ. 77

Այսօր, տեղւոյս անուանի սրճարանում (café central) մէջ գտնուելով Կ. Պոլսոյ «Մասիս» լրագրին ներկայ 20 և 23 թուականաւ թերթերը աչացս հանդիպեցան՝ բնականաբար խնդացի և փութացայ ընթերցանել դրանք։ Մեր լրագրութիւնը նաև բաւական յառաջադիմել է, ներկայ քաղաքական անցից և այլ ամեն կարգի դիպաց նկարագիրը տրչոփ դարելի է փութով կը հաղորդէ ընթերցողաց։

Ներկայ 23 թուական թերթը իւր յառաջաբանին սկիզբն կազմող հետևեալ ուրախալուր տողերուն պատճառաւ, նոր մտադրութիւն մի ազդեց իրեն, արտուիս վրա չարժեցոյց միտքս, և կարծիք հաստատ դիրք մի ուզեցի ընարել ընթերցումս չարունակելու համար։ «Յունվ. 9 կիրակի օրն, ազգային տարեգրութեանց մէջ ոսկեղէն տառերով նշանակուելու արժանի օր մ՚էր» Շարունակեցի ընթերցումս մինչև վերջը միշտ հետաքրքրաբար, և տեղեկացայ լիսմին որ վերոյիշեալ տողերը մնասաց կարապետ են եղել հակառակ իմ յուսոյս։ Նոր բաղատաւորութիւն չը կայ՝ ժառանգութիւն, կալուած, ոսկիաձին մի բան, համալսարան, վարժարան, ուսումնարան, արուեստանոց, զորձարան, գոնէ մի եկեղեցի, առ նուազն մի տնակ, մի խրճիթ, և վերջապէս մի ատակ ընող բան չը կայ հային համար։ Տէրը արտաքոյ կարգի մի չնորհ բրել է իւր դերեաց, ինչ չնորհ է արդեօք, ցիծաղկոտ նոցա երեսին նայել է։ Տէրը քանի որ կը հանի այս երջանկաբէտ կարծեցեալ քաղաքավարութիւնը ընելու եղեալի դերեաց, ես կը կասկածեմ թէ ատոր տակը դարձեալ չանդգիտութիւն մի ըլլալու է, մարդասիրութենէ բղխեալ գութ գորովոյ չէ։ Կ. Պոլսոյ բ. մեծ եպարքոսը քան տերութեան նորոգ ցրագրեալ սահմանադրութեան, մեր ազգային պատրիարքարանը այցելութիւն ըրել է, չքեղ ընդունելութիւն ըրել են հայերը, և այս առթիւ Թուրքիոյ հպատակ հայոց ազատ կենցաղավարութեան, յառաջադիմութեան նկատմամբ երկու կողմանց բանախօսութիւնք տեղի ունեցել են։ Շատ բարի շատ գեղեցիկ... Շուրջս հայեացք մի ձգեցի և լաւ նկատեցի որ հոյ չը կայ, ամեն օտարազգիք են, չիտակը խոսամանելով եթէ հետաքրքրական տեսարան մի չը համարուէր օտարազգեաց առջև լալը, պիտի լայի։ Ո՛վ հայեր, մեծ տեղութիւնս կը չարժի այդ ձեր խնդութեան վրա, ես ձեզ ուրախակից բնաւ չեմ փափագիր ըլլալ, միթէ ձեր սարկութեան մէջ տարապայման նեղութիւններ քաշելով այս ատիճան ցած ոգի էք ստացել։ Որով իրաւամբ, բ. մեծ եպարքոսին մեր պատրիարքարանը ըրած այցելութիւնը արժանի է ոսկեղէն տառերով մեր տարեգրութեանց մէջ նշանակելու։ Ի՞նչու. այդ քիչ է. մայր եկեղեցւոյ գաւթին մէջ, անմահացնելու համար նորա գալուստը, պղնձաձոյլ արձան մը կանգնեցէք, ինչպէս մօտերս ասա Գերմանիոյ ակադեմիայ բանաստեղծին Շիլլերի, բովանդակ Գերմանիոյ մատուցած չքնաղ ծառայութեանցն համար, և նշան երախտագիտութեան մեծադիր արձան մը կանգնեցին։ Ս. պատրիարքը իւր թուրքերէն բանախօսութեան վերջը այնպէս կը խօսէ, որ նորա խօսքերի իմաստը Մասիսի յառաջաբանին իմաստէն մեծապէս տարբեր է։ Մասիսն չնորհակալ ըլլալու է, քիչ մը ազատամտութիւն զործել է. սա կրսէ, ոսկեղէն տառերով նշանակենք, իսկ Ս. պատրիարքը ոսկեղէն տառերը բաւական չը համարեր։ Ց. խորէն սրբազանը նաև բանախօսելով այսպէս կրսէ «Ազատեցէք զմեզ տէրէպէյլիներուն և քիւրտերուն ձեռքէն» իսկ բ. մեծ եպարքոսը Ս. պատրիարքին իրրև պատասխան խօսածին մէջ կրսէ. «Մի՛ Հայոց պատրիարքարան գալը մեծ բան մը չէ և թէ չատոնց այսպիսի յարաբերութիւններ հաստատուած ըլլալու էրն։ ։ և այլն.»

Ասոնք յառաջ նա յունոց պատրիարքարանը փոացած է ոտիկ. յունաց պատրիարքը իւր բանախօսութեան մէջ կրսէ «Այդ այցելութիւնը իրր նշանաւոր պատուոյ առնուաստնոյ մը կը նկատեմ այդ եղեղցւոյն և ազգին համար որոյ հոգևոր գլուխն եմ»

Օրինակ առնելու եմք յունաց Ս. պատրիարքէն, արդարև գեղեցիկայարմար խօսել է, և ազնիվ ազգասէր ոգեկն մեր մէջ պարզապէս և վայելուչ խօսել է գեղեցիկ արքանը։

Մեք դիրաղատարար օտարազգեաց հետ պաշտօնական և քաղաքական յարաբերութիւն ունեցած չենք, բայց և այնպէս տեսնելու, լսելու և ուսանելու յատկութիւնք չեն պակաիր մեզ, ուստի չեմք կրնար մեր այս մասին գործած թերութեանց համար զմեզ բոլորովին արդարացնել։ Մեք ալ մեր արժանիքն ունինք և եթէ ինքնատաք չառնելով յախտանն զարձեմք, ինքար մեզ կը հասնի և յանցաւոր մեք եմք։

ԱՐՏԱՔԻՆ ԼՕՒՐԵՐ

—Հեռագիրը հաղորդում է անհանդստացնող լուրեր Կ. Պոլսից։ Երևում որ Թիւրքիայի մայրաքաղաքում ժողովրդի մէջ խռովութիւն կայ։ Զորս հազար սօֆիթաներ զինուորված են և օրից օր սպասվում են անկարգութիւններ։

—Ամիրիկայի Միացեալ Նահանգների նախագահի ընտրութիւնները վերջացան։ Վեցնական կերպով նախագահ ընտրվեցաւ հանրապետական կուսակցութեան կանդիդատ պ. Հայս։

—Կ. Պոլսից հեռագրով հաղորդում են տեղական ռուս լրագիրներին, որ հին Թիւրքայ կուսակցութիւնը բորբոքված է։ Միրիդիտները ապստամբվեցան։ Լուրեր կան, իբր թէ Միդհաթ-փաշային պէտք է յետ կանչեն արտասահմանից։ Սօֆիթաները խնդիրք ներկայացրին Սուլթանին, Միդհաթ փաշային արտասահմանից յետ կանչելու համար։

—Բէլգրադից հեռագրում են որ Իվան Միլան հանդէս անելով իր զօրքին և կամաւորներին, յայտնեց թէ դեռ անհարմար է խաղաղութիւնը հաստատած համարելու այդպատճառով զօրքերը ուղարկված են Սերբիայի սահմանները։

—Սերբիական «Истокъ» լրագիրը գրում է որ Թիւրքիան է որ կամենում է խաղաղութիւնը և ոչ թէ Սերբիան, և խորհուրդ է տալիս Թիւրքայ տերութեանը հարկի մի յայտնի զումարի համար յետ տալ Սերբիային Բօսնիա, Հերցեգովինա և Հին-Սերբիա նահանգները։

—Թիւրքիայի և Սերբիայի մէջ խաղաղութեան պայմանների կապելու մասին հեռագիրները հաստատող են։ Մի քանիներ հաստատացնում են որ պայմանների կապելը յետ է ձգվում, երկու երկրների միմեանց մէջ ունեցած յարաբերութիւնների անորոշ լինելու պատճառով, իսկ ուրիշ հեռագիրներ հաղորդում են որ Թիւրքիայի և Սերբիայի մէջ խաղաղական պայմանների կապելու գործը աջողակ կերպով առաջ է գնում։

ԻԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Շնորհակալութեամբ ստացանք «Փորձ» եռամսեայ հանդիսի երրորդ տետրակը։ Խմբագրութիւնը այդ տետրակի մէջ բացատրում է թէ ինչ պատճառով այդ տետրակի լոյս տեսնելը ուշացաւ, այն է որ խմբագրութիւնը կամենում էր իր հանդէսը ամսէ ամիս հրատարակել, բայց տասնյակ բոլոր տպարանի զանազանութենից։—Ուրիշ անգամ մենք կաշխատենք խոսել այդ տետրակի վրա, իսկ այժմ կը ծանօթացնենք մեր ընթերցողին այդ տետրակի պարունակութեան հետ 1. Գրէգոր Նարեկացի, գրած Շիլլերի, Գ. Բարխուդարեանց.—2. Կարապետ արքեպիսկոպոս, Գեոնագրութիւն, 3. Գեղամանց.—3. Պանդուխտ վանցին, պատկեր գաղթական. մշանների կեանքից Գրիչ.—4 Մշեցու հեկեկանքը, վանեցի գեղջուկի տաղը, վանեցի կորիչ, Գամառ-Քաֆիկա.—5. Տաճկատանի հայոց իրաւունքները և նոցա սահմանադրութիւնը, պատմական տեսութիւն, Ա. Երիցեանց.—6. Երեք պրոց, Պէֆօնս Գոդէրց,—7. Բողոք առ Եւրոպա. Գամառ-Քաֆիկա.—8. Ազգութեան խնդիրը, պրոֆէսոր Զիլիբրի Բրի.—9. Հայի զանգատը, ձայն գաղթականաց յանու-

ՍԱՊՈՆ ՈՒ ՍԱՊՈՆԱՏԵՂԻ

ՎԱՐԴԱՎԱՌ

Ամենաօգտակար ներկայացուցիչ բոլոր մազերի ներկերի և ներկելու միջոցների։ Ամենաարագ գործող միջոց մազերի ներկելու համար։ Ամենաանվնաս միջոց մազերի ներկելու համար։ Ամենաանվնաս միջոց մազերի ներկելու համար։ Ամենաանվնաս միջոց մազերի ներկելու համար։